



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՌԱՍՏՐԱՆԻՍՏԱՆԻ ԶՄԻՌՆԻԱՅ ԵՄԵՐԱԹ 28 ՅՈՒՆԻՍ 1875 ՔԻՒ 1017

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Մեծին Բրիտանիոյ երեսփոխանական ժողովոյ մէջ վերջին օրերս աշխոյժ վիճարանութիւն մի հոգաւ թուրքիոյ գործոց վրայէք. ոչմանրագլուխ երեսփոխանք ունանք գրգռեալ յանդամոց Աւետարանական դաշնակցութեան (որք յանցեալմէն 'ի Կ. Պօլիս եկան և չյաջողեցան օգոստոսական Սուլթանին ներկայանալու) գանդատարի հարցումներ ըրին կառավարութեան 'ի վերայ ճշդիւ գործադրութեան Հաթթի Հիւսնիէն թուրքիոյ մէջ, և պահանջեցին որ այս օրէի ինչոյն նկատմամբ Անգղիոյ կառավարութեան և Բարձրագոյն Դրան մէջ տեղի տեցած է նախանական թղթակցութիւնքն ինչոյն անոցն առջև գրուին. Ուրիշ անխոհեմ երեսփոխանք, պահանջեցին որ անգղիական կառավարութիւնն միջամտի ինչի թուրքիոյ ներքին գործոցը:

Արտաքին գործոց երկրորդ տեսուչ միտար Պարք խոստացաւ զիշեալ թղթակցութիւնն հարցել երեսփոխանական ժողովոյն, այսու ամենայնիւ փութացաւ պաշտպանել թուրքիոյ ընթացքն՝ յառաջ բերելով թէ օսմանեան կառավարութիւնն 'ի քառասուն ամաց հետէ կարի մեծ յառաջող իմութիւններ ըրաւ գէմընելով արտաքոյ կարգի գ ժողարութեանց, որք անպակաս իւր քայլերուն առջև կեկէին Դարձեալ յաւելցուց թէ բրիտանական կառավարութիւնն իրաւունք չունի թուրքիոյ ներքին գործոց միջամտի լինել, և թէ այսպիսի փորձ մի ընելու ելլէր, տարակոյս չկայ թէ այժմեան բարեկամական յարաբերութիւնքն որք հաստատեալ են 'ի մէջ Բարձրագոյն Դրան և Անգղիոյ, չուտով պիտի աւրուէին, և թէ օսմանեան տէրութեան անխախտ իմութիւնն հաստատ պահել հարկաւոր է:

Այս վիճարանութիւնն ըստորուժ՝ այժմեան երոպական քաղաքականութեան հակառակ է

և անտեղի, տարակոյս չկայ թէ հետեւութիւն մի պիտի չունենայ, այլ խոսեալ աղատութեան արդիւնքն է, որ անպակաս կրտսնութիւն մեծ ու փոքր տէրութեանց բարձրանալու մէջ:

Ամսոյս 16—28ին Եգիպտոսի մէջ միջազգային նոր դատարանաց հաստատութիւնն տեղի ունեցաւ 'ի ներկայութեան Խըտիվին, որ չըլապատեալ էր 'ի նախարարաց իւրոց և 'ի մեծատիեան գործակալաց: Այս բարեպատեհ առթիւ Նորին Բարձրութիւնն, պարագայիս յարմար պատուական դահախօսութիւն մի ըրաւ, որոյ համառօտ իմաստն հետեւեալն է. «Փառք Աստուծոյ, ըսաւ Խըտիվն, որ օգնութեամբ օգոստոսական Սուլթանին և պաշտպանութեամբ օտար տէրութեանց կարող կըլինի՝ կատարել այսօր զհանգէս հիմնադրութեան այս նոր դատարանաց: Ուրախ եմ տեսնելով իմ չորս կողմն այսքան երեւելի ու պատուաւոր անձինք, 'ի վերայ որոց կատարեալ վստահութիւն ունիմ՝ վասն բարձր վարչութեան դատաստանական արդարութեան, Համդեալ եմ սրտի մօտ թէ նոցա իմաստութեամբ բոլոր օգուտներն կատարեալապէս երաշխաւորեալ պիտի լինին և այս կերպիւ՝ դատաստանական նոր ատեանքն 'ի ձեռք պիտի բերեն զհնազանդութիւնն և զհասարակաց յարգանս: Եգիպտոսի պատմութեան մէջ այս օրս նշանաւոր ամսաթիւ մի պիտի լինի և քաղաքակրթութեան նոր թուականի մը սկզբնաւորութիւնք: Համդեալ եմ, թէ Ողորմութեամբն Աստուծոյ՝ ապագայիս այս մեծ գործոյ՝ զոր կըհաստատեմ այսօր, ապահովեալ է կատարեալապէս»:

Զինի այս դահախօսութեան, բարձրապատիւ Խըտիվն մարդասիրաբար ընկալաւ զինդակցական յարգանս օտար տէրութեանց դեսպանաց, ինչպէս նաեւ բազմաթիւ երեւելի անձանց:

Յայտնի է թէ 'ի վերջին ժամանակս ինչ ինչ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ջեմեալեալ կարեւոր տեղեկագրութիւնն, Միւրաթի Յունիսի 7 թիւէն քաղելով, արժան կըհամարուի մեր ընթերցողաց հազորդեւէն ուղարկութիւնն հրաւիրելով այս գրուածոյն վերայ, որ ընդհանուր Հայոց ազգին օգտից կըվերաբերի:

ՏԵՂԵԿԱՎՈՐԻՐ

Դատարարական Եւ կալուածոց միացեալ դիւանոց 'ի վերայ Մուրատեան վարժարանի Փարիզոս:

Ամենապատիւ սրբազան Պատրիարք Հօր առաջարկութեամբ փարիզոս Մուրատեան վարժարանին խնդիրը ազգային ժողովէք միացեալ իրանացոյս ի նախաքննութիւն յղեալ ըլլալով, իրացեալ դիւանքս կըփութամք այժմ մեր տեղեկագիրը ներկայացնել ազգային ժողովիդ:

Մուրատեան վարժարանի խնդիրը հիմէն քննելու և հետազօտելու համար արժան համարեցինք թէ ողորդեան գերաւ տէր Սարգիս վարդապետին քառահատոր պատմութիւնը որ Մուրատեան և հայկազնեան վարժարանաց վրայ հրատարակած է 1866 թուին ի փարիզ, ծայրէ ի ծայր և ուշի ուշով վերձանել, որմէ լիովին տեղեկացեալ կըանենք որ ի 20 Ապրիլի 1816 ի Մուրատ վախճանեալ բարեյիշատակ աղա Սամուէլ Մկրտիչ Մուրատի յառուկ կապակցութիւն արդեամբ հիմնեալ է Մուրատեան վարժարանին ի փարիզ:

Աղա Սամուէլ Մկրտիչ Մուրատ՝ Հնդկաստանի Մատրաս քաղաքի հայազգի վաճառականն իր կտակագրին մէջ առանձին բաժին հանելով նաեւ Հայոց ազգին որք և աղքատ մանկանց դաստիարակութեան համար, իր ստացուածքին մէկ մասը (որ 1 1/2 միլիոն ֆրանք գումարի մը կը հասնի, և որ յետոյ իր տոհմներովը մինչև 3 միլիոն ֆրանքի մօտ բարձրացած է) կը յատկացնէ որ անոնցմով դպրատուն բացուի և Եւրոպայի յարմար տեղ գետններ գնոյ առնուին, և այն գետններուն եկամուտովը որչափ որ արդիւնք բերեն և քանի մանկանց տարեկան ծախուցք բաւական լինին, այնչափ Հայոց ազգին որք և աղքատ մանկունք յիշեալ դպրատան մէջ ձրիապէս ուսմունք և լեզուք ուսանին, և իւրաքանչիւրն դառնայ իր հայրենիքը, և մանկանց վրայ քահանայ ըլլալու պարտականութիւն չդրուի, և հարուստ ծնողաց գաւազանքն իւրեանց ծախքերնին վճարեն, որպէսզի չըլլայ թէ զրկուին Հայոց ազգին որք և աղքատ մանկունք իրեն կարգադրեալ կտակի արդիւնքը վայելելէ: և այս դպրատան շինութիւնը և գետններ բաւ գնումը վեներտիկեան հարց խորհրդոյն և միջնորդութեան համաձայն ըլլալ կըպատուիրէ, և կտակատարը կըկարգէ իւր երկու որդիքը Եգիպտոսի Մ. Մուրատ և Յովհաննէս Մ. Մուրատ և իր կինն Աննա, և կըպատուիրէ որ իւր բանքը և կամքը ամէն դէպքի մէջ Անգղիացւոց օրինաց համաձայն կարգադրուին և ոչ այլ որ և իցէ ազգաց:

Ահա այս է բարեյիշատակ աղա Սամուէլ Մկրտի

մարաձայնութիւնք պատահեցան Գերմանիոյ և Գաղղիոյ կառավարութեանց մէջ տարաձայնութիւնք որք պատերազմ կըսպառնային: Բայց Ռուսիոյ և Մեծին Բրիտանիոյ տէրութիւնքն փութացան միաբան ջանքեր խոյն տարաձայնութեանց առաջը առնուլ, որով յաջողեցան իւրոպիոյ խաղաղութիւնը վերահաստատել:

Այս խաղաղասիրական միաբան ջանքէն իրադիրք ունանք կըհետեւեն թէ մոսկուսոյ քահանայութիւն մի եղած է 'ի մէջ Ռուսիոյ և Անգղիոյ տէրութեանց կեդրոնական Ասիոյ 'գործող նկատմամբ և կըհաւանտեն թէ այս դաշնակցութիւնը հիմնեալ է 'ի վերայ սահմանադրութեան փոխադարձ ներգործութեան այս երկուց տէրութեանց յիշեալ երկրին մէջ: Ուր Ռուսիոյ դրացիութիւնն իրեն ծանր վտանգ և սպառնալիք նկատուած է 'ի բրիտանական կառավարութեան:

Այսպիսի դաշնակցութիւն մի թէ և տակաւին ստուգութեան կարօտ է, յոյժ հաւանական կերևի Հաստիւն. մանաւանդ որ կրտսններ թէ Ռուսիոյ և Մեծին Բրիտանիոյ մէջ եղած քաղաքային յարաբերութիւնքն երթալով ևս ուսուել բարեկամական կերպարանք կըստանան:

Բէգէրպարլէն Լոնտոնի Սթըւարթ օրագրոյն կըմանուցանեն թէ Ռուսիոյ կողմ օրագրին նոր յօդուած մի կըհրատարակէ 'ի վերայ անկողնական դաշնակցութեան, յառաջ բերելով թէ պատերազմի տուգանաց գումարն զոր վճարեց Գաղղիան, կ'առայէ Գերմանիոյ 'ի կանգնել ամրոցս ընդ երկայնութեամբ Ռուսիոյ սահմանագլխոց, և թէ զինուորական զգուշութեանց այս դրութիւնն կապացուցանէ թէ գերմանիան մեծ վստահութիւն չունի Ռուսիոյ բարեկամութեան վերայ: Այսու ամենայնիւ, կըյաւելու յիշեալ թերթն, երեք կայսերաց միաբանութիւնն կրնայ տեղի ունենալ հանդերձ անկողնական դաշնակցութեամբ, եթէ Գերման

տիչ Մուրատի Հայոց ազգին որք և աղքատ մանկանց համար ըրած կտակին իմաստը:

Բարեյիշատակ հանգուցելոյն կտակակաւորք իսկզբան կըգծկամակին կտակեալ գումարը ուղղակի վեներտիկոյ հարց ձեռքը և ամէն բան առնոց կամացը յանձնել, որուն համար վեներտիկեան Հարք գաղտնի հրահանգ տուած էին Թէոդորեան և Սօմալեան վարդապետաց: այս պատահաւ կտակին գործադրութիւնն ուշանալով, կտակեալ գումարն վրայ տոկոսներ կըբարդուին, և ուր ուրմի Մատրասու Անգղիական դատարանին վճուով կըպարտաւորին կտակեալ գումարը յանձնել վեներտիկեան հարց, այս կտակին գործադրութիւնն այնքան ժամանակ յապաղեցնելուն համար:

Դիտել պէտք է որ այս յապաղման 2 կողմն ալ տեղի տուած են, բայց դիտարարաւ վեներտիկեան հարց գաղտնի հրահանգն եղած է: որուն հետեւանքն եղաւ ըստ կամաց իւրեանց, կտակեալ գումարն ամբողջ իրենց ձեռքն անցնելը: Եւ որպէսզի կտակատարաց ապուղջ միջամտութենէն ալ բոլորովին ազատ և աներկիւղ ըլլան, վեներտիկոյ միաբանութիւնը կտակեալ գումարն վրայ յետոյ բանուած տոկոսէն 500 000 ուրբի, որ մէկ միլիոն 250 000 ֆրանքի չափ կընէ, կըհաճին զեղծել և մնացորդն ուսուել բարեյիշատակ հանգուցելոյն ժառանգորդներէն, անոնց ձեռքէն ստորագրութիւն տանելով թէ բոլորովին հրաժարած են կտակակաւոր ըլլալու իրաւունքէն:

Դատին փաստաբաններն այս վիշտան զէմ

Նիսան անկեղծութեամբ կրկնաբար հաստատուն
սլահել զխաղաղութիւնն :

Յանցելունս որը Տուհաս Ծըրսայթ արտաքոյ
կարգի դեպքանի պաշտօնիւ յուղարկեցաւ ի
Մանսէյ , (որ Պիրմանիոյ թագաւորանիստ մայր-
քաղաքն է) Անգղիոյ ինչ ինչ խնդիրներն
Պիրմանցոյ թագաւորին ներկայացնելու հա-
մար : Նորին վեհափառութիւնն , թէև զօ-
րաւոր և իւր զինուորական պատրաստութիւնքն
կատարեալ , այսու ամենայնիւ մարդասիրական
ողիւնէ չարմէալ և խաղաղութիւնն աւելի օգ-
տակար համարելով իւր ժողովոց համար ,
հաճութեամբ ընդունեցաւ Անգղիոյ կողմաւոր-
ութեան խնդիրներն : Հետեւաբար Պիրմանի
տէրութեան և Անգղիոյ մէջ եղած բարեկամա-
կան յարաբերութիւնն հարստաւորն մնացին :
Այս յաջող լուրն որուն ստուգութեամբ վերայ
տալիսկոյ չկայ : Ունեկունէն Յունիսի 21 ամա-
թեալ հասած հեռագիր մի բերած է ի խնամն :

Թարգոյ խմբագիր

Ահաւասիկ երկու նամակաց ընդօրինակու-
թիւնները , զորս խոստացած էի ձեզ անցեալ
ամսոյ 14ին գրութեամբս : Գործը այն ամ-
սոյն 17 թիւովս հրատարակած էր :

Ա. Կ. Տ.

Զմիւռնիա , 28 Ապրիլ 1875

Առ Նորին արքայազն Բարձրութիւն , Արշակունի
Խոնարտ իշխան Կալէսի , բարձրապատիւ մեծ
Պատկառելի վարպետ Անգղիոյ :

Անք ստորագրեալքս , պատկառելի վարպետք ,
անցեալ վարպետք և պաշտօնակալք , օրինա-
ւորապէս հաստատեալ և սահմանադրեալ մա-
սնական ժողովարանաց Զմիւռնիոյ ընդ իրաւա-
տութեամբ Անգղիոյ մեծ ժողովարանի , խոնար-
հաբար մատչիմք ձեր Արքայազն Բարձրութեան
պաշտօնի մեր խնդակցութեան և շնորհաւորու-
թեամբ հաւատարմէն յայտնեմք , Անգղիական
մասնութեան ամենաբարձր պաշտօնէն հասնե-
լով Կ. Կ. Կ. :

Ձեր բարձրանալը շնորհաւորելով , ուրիշ բան
մը չենք կրնար ընել բաց թէ մեր հին եղ-
բայրութեամբ բարեբաղդ սեպել այնպիսի ա-
ռուշնորդ մի ստանալով , որու համբաւը համա-
տարած է և որու առաջնորդութիւնը ուխտին
պայծառութիւնը պիտ' աւելցնէ , և հասցնէ
դայն այնպիսի բարեշնորհ բարդաւաճութեան ,
որու մինչև հիմա դեռ հասած չէ :

Այն յառաջընթաց շրջանին մէջ ձեր արքա-

կերողքեն , և կառավարիկն որ վենետիկ միա-
րանութիւնն իբրև կտակին նենդող ինք ալ
զրկուի կտակին դործագիրն ըլլալու իրաւուն-
քէն , և Անգղիոյ կառավարութիւնը տէր և
պաշտպան կենայ այս կտակին : Դատարանն ի-
րաւունք կուտայ փաստաբանից : Բայց նկատե-
լով որ կտակը կալ Հայոց ազգն Անգղիոյ հպա-
տակ չէ , օրինօք չկրնար ինք միջամտել և բոս
որուն Հայոց ազգին որը և աղքատ մանկաց
ներկայացնել մը հոն չկայ , որ անոր բողոքին
միայն դատարանն իրաւունք մնա , կրմբօք
փաստաբանից բողոքը , բայց կը հաստատէ թէ
Հայոց ազգին որը և աղքատ մանկանց ներկայ-
ացուցիկն կրնայ բողոքել , երբ որ ուղէ , և վե-
նետիկ միաբանութեան այս զեղումը ոչնչացը-
նել և այդ դեմարն իր տոկոսներովն պահան-
ջել ժողովարաններէն և ժողովարանից ժա-
ռանգորդներէն ինչ , և կտակին տէր հանգնել :

Վենետիկ միաբանութիւնը ոչ միայն ի սկզբ-
բան այս զրկանքն ըրած է Հայոց ազգին որը և
աղքատ մանկանց , այլև իր ստացած գումարովը
իտալիոյ մէջ դեմքներն գնելէ : և վարձարանը
Բատուայի մէջ բանալէ ետքը , Աւստրիոյ կա-
ռավարութիւնէն ի հաշուետուութիւնն ստացած
հրամաններէն խոստովելով , դպրատունը լռել-
եալն ի ֆորմիլ լըվիմանդը , և փոխանակ Հայոց
ազգին որը և աղքատ մանկանքը կրթելու ,
հաշուաւ կտակարար բարերարին կամաց ու-
րիշներ կը կրթէ , որոնց շատերն այս բարիքը
փայտելու արժանիքն չեն ունեցած , և փայ-
տելով ու վենետիկ միաբանից հետ անձնական

յական Անունը իբր բարեբաղդ դուշակութիւն ,
փառաւորութիւն է բոլոր ուխտէն , և հաւատար-
մէն որ մինչև ապագայն երթալու է , և Ա-
բարձրութեան ճօրճ թագաւորանդ իշխանին ,
Սիւսէքսի դքսին և ուրիշ երեւելի եղբայր ան-
ունաց հետ որոնք մարդկութեան ընդարձակ
դաշտին մէջ կողմնակցութեան կոպարներէն
անդին կրնային նկատել :

Զմիւռնիոյ ժողովարանները յերմեռանդ և
անկեղծ բարեմայլութեամբ կաղթեն որ ար-
եգերքին մեծ ճարտարապետը ձեր ամէն դոր-
ծոյ մէջ առաջնորդէ զձեզ , և պարկեւտցէ
ձեզ երկար կեանս , որ ուխտիս մէջ մեր կառա-
վարին ըլլաք :

Թ. Պօքրմի	Պ. Վ. Հօմեր ժող. 806
Թ. Նարքն	Ա. Վ. » » » » կնիք
Ս. Կ. Տեռեհան	Ա. Տ. » » » » կնիք
Ս. Ծօի	Բ. Տ. » » » » կնիք
Բ. Կրիկոսիտիս	Պ. Վ. Վիքթոր ժող. 896
Ճ. Տ. Բանալի	Պ. Վ. » » » » կնիք
Ա. Կ. Տեռեհան	Պ. Վ. Տիգրան ժող. 1014
Գ. Զմարտախօսեան	Ա. Վ. » » » » կնիք
Յ. Առաքիեան	Ա. Տ. » » » » կնիք
Յ. Քրմաճեան	Բ. Տ. » » » » կնիք
Ի. Խալան	Պ. Վ. Սիօն ժող. 1340
	Ա. Վ. » » » » կնիք
	Ա. Տ. » » » » կնիք
	Բ. Տ. » » » » կնիք

Ճ. Տ. Բանալի . Եւսիպոս
մասնաժողովին Անգղիոյ ժողովարանաց Զմիւռնոյ :
Ս. Կ. Տեռեհան , բարտեղար
մասնաժողովին Անգղիոյ ժողովարանաց Զմիւռնոյ :

ՊՕՏԱՍԻՍԻՆ

Մասնական Տաճար , Լոնտոն
8 Յունիս 1875

Սերէի աւեր և եղբայր

Ձեր միջոցաւ ինձի յանձնած նախադիրը
ձեր նամակաւ որ ի 18 անցեալ ամսոյ , և Ա-
բարձրութեան Կալէսի իշխանին ներկայացուցի ,
և հրաման աւելիմ իրմէ որ ձեր միջոցաւ , որ
մասնաժողովին նախագահն էք , շնորհակալ
ըլլամ Զմիւռնիոյ ժողովարաններէն որք կը շնոր-
հաւորեն զինք մեծ Պատկառելի վարպետութե
պարտաւորութեանց ձեռնարկութեան համար
իշխանը կըզգայ պատասխանատուութիւնները
որոնց ձեռնարկած է , բայց կը յուսայ որ իր
պաշտօնին պարտաւորութիւնները այնպիսի
կերպով պիտի կատարէ , որ պիտի արդարացնէ

յարաբերութիւն ունեցողներն եղած են ընդ-
հանրապէս : Այս մասնաւոր խնամքն ալ կտակ-
եալ գումարին արդեանց չափովը եղած չէ :

Վենետիկ միաբանութեան այս ամէն արար-
քը , և նոյն իսկ կտակեալ գումարին մէջ ըրած
չեալ և յուսի մասնակարարութիւնը ցաւ կու-
տայ բոլոր ազգասիրաց : Հետեւաբար տեղի և ի-
րաւունք կուտան ընդհանուր ազգին բողոքե-
լու անոր աղգապատ ընթացիցը դէմ , որ հակա-
ռակ ազգէն մինչև ցարդ վայելած բազմաթիւ
նիւթական և բարոյական ձեռնառութեանց ,
այսպէս կը համարձակի աղա Սամուէլ բարերարի
կամքը ապագային թողուլ , և իբր թէ աղա Սա-
մուէլ Վենետիկ միաբանից անձնական վայել-
մանցը համար յատկացուցած ըլլար այդ ահագին
գումարը , և Հայոց ազգին որը և աղքատ ման-
կանքը զրկած , Վենետիկ միաբանութիւնը ,
կրնա՞ք , վերջին տարիներս բոլորովին կըզոցէ
Մուրատեան վարձարանը , և մինչև ցարդ իրեն
դէմ պաշտօնական բողոքոյ ձայն բարձրացած
չըլլալէն , մանաւանդ իրենց դիրքէն աւելի
խրախուսուած , (ըստ որում կտակը Անգղիոյ օ-
րինաց տակ է , Վենետիկ վանքը և Մուրատեան
վարձարանի կալուածները իտալիոյ մէջ , Մու-
րատեան վարձարանը Ֆրանսայի մէջ , իրենք
Վենետիկ միաբանք Օսմանեան հպատակ են)
այս գաղաղաբար ընթացքը կը շարունակէ և
Հայոց ազգին որը և աղքատ մանկանքը կըզրկէ
Մուրատեան բարերարին կտակին արդեանքը
վայելելէ :

Միտցեալ դ իս անքս կի զրախոյններ թէ 1

զինք իրեն արքայազն յաջորդներուն կարգը
դասուած ըլլալը :

Մասնաւորապէս շնորհակալութիւն յայտնե-
լու եղբայր վարդան փափաքեանին , որ Ձե-
անեղման առթիւ երգ մը յօրիներ էր , և յիշե-
ցնելու որ մեր արքայազն մեծ վարպետին շատ
հաճելի երեցաւ , Զմիւռնիոյ պէս հեռաւոր
տեղէ մը նուազուած և այսպէս բնեք գիշեր-
երգուած (սերէնէյտը) ըլլալը :

Մնամ իրեկի տէր և եղբայր
ձեր անկեղծ եղբայր
Ճօն Հեմիլ Գ. Գ.

Առ մեծաւ ճօրճ Տ. Բանալի ,
Նախագահ , մասնաժողովին ի Զմիւռնիա :

ԱԶԳԱՅԻՆ

Իզմիր , 24 Յունիս 1875

Յարգոյ խմբագիր Արշակունի խաղաղ
Ձեր ազգօգուտ յազարայն միջոցաւ երախտագիտա-
կան անդամներ պարտք մը կատարելու համար յե-
տադոյ շնորհակալեաց ուղերձք կ'ողարկեմք ձեզ
խորհելով որ յառաջիկայ թերթովիկ իրաւարակաւ
բարեմայլ :

Մեծաւոր տեսար Եղբայր Յակոբեան ,
ի փառք եւ յԱրքայազնիս :

Սզգասեր տեսար ,
Ի նպատակ քաղաքիս Հայ ընթերցատան , ինքզն
ամէն տարի նոյնպէս 1875 տարւոյ շրջանին համար
եւս . . . Պալլադարեան Լալիս ազգի ձեռնար
ձեր նուիրած ինն օսմանեան իրան ամբողջ ընդունե-
ցինք , ուստի կրիտարամք մեր օրքն եւ անկեղծ շնոր-
հակալութիւնները ներկայիս մատուցանել ձեզ : Տե-
րէն խորհուրդս բաղձն արարել կը ցամաքի նաեւ մաս
նաւոր շնորհակալութիւն մատուցանել ձեզ : Երբ տե-
սակ զաղդիարեան ընտիր եւ օգտակար յազարայն
խմբար , գործ յարստեւ կրչարեանակի բնութիւնը
քերչարեան և փայտան ձեր հայրենակից ուսում-
նական ընթերցողներն : Մեծաւորս , գոցե ան-
հաճոյ բառ ձեզ , բայց մեր պատշաճ կը համարիմք
հրապարակու մատուցանել ձեզ մեր անկեղծ շնոր-
հակալութիւնները , վասնզի դոք , ձե , այս առատա-
ձեռն նախընտրովք , մեր ընթերցատան առաջին կարգի
բարերարները կը համարուիք , եւ արդեւ ընթերցա-
տան բանգարանն , որ դեռ հագիւ 600 հատոր գիրք
ունի , ձեր նուիրած 120 հատոր ընտիր գիրքերու յի-
շատակը անմոռաց կը պահէ : Եւ պիտի պահէ յառիս-
եան :
մնամ շնորհակալու
անկամք տնօրէն խորհրդոյ
Հայ ընթերցատան :

աղա Սամուէլ Միլլիտի Մուրատ իրաւունք Հայոց
ազգին բարերարութիւնն ըրած է , մեծ գումար
մը կտակելով Հայոց ազգին որը և աղքատ ման-
կանց դատարարութիւնն : Հետեւաբար Հայոց
ազգին շնորհակալութեան արժանի ըլլալով , աղ-
գային ժողովը ի դիմաց Հայոց ազգին որ ի
Տառակատան աղա Սամուէլ Միլլիտի Մուրատին
յիշատակին պէտք է իր յարգանաց հաւատարմի
իր քուէտը նուիրէ : Զ. Գերա . Թեոդորեան տէր
Սարգիս վարդապետն թէ ի սկզբան և թէ յե-
տու և թէ մինչև ցարդ աղա Սամուէլ Միլլիտի
Մուրատին բարերար կամքը ի դործ գնելու
մասին տարած ջանից և տառ ապանացը , և ի
վերջոյ այս խնդիրը որդեգրել մատուցութեան
տակ չթողնել և որոշող աղքատաց զրկանքին
համար օր մը կարենայ ազգը բողոքել , այն ին-
դիրը իր անհաւաք աշխարհը գրի առնելով
հրատարակած և ընդհանուր ազգին ծանուցած
ըլլալու համար ազգային ժողովը դուրսէն
արժանի է : Եւ Վենետիկ միաբանութիւնը թէ
ի սկզբան և թէ յետոյ և թէ մինչև ցարդ աղա
Սամուէլ Մ. Մուրատին կտակին իրաւունքով և
անոր բարերար կամացը անհաւատարմի գնաւու-
նով , Հայոց ազգին որը և աղքատ մանկանց
զրկանք ըրած է . ուստի ազգային ժողովը ի
դիմաց որը և աղքատ Հայ մանկանց որ ի Տառ-
կատան , պայտապան կամչներով Մուրատեան
կտակին , այս խնդիրն պէտք է որ յիշ ազգային
վարչութեան ի կատարուած և ի տնօրէնութիւն

(Ստորագրութիւնք :)

—Երեւոյն Բրիտանիոյ հիւպատոս ի քաղաքին
մեծաշուք միտար Բ. Վ. Բեմսլէյնայէլ, որ մար-
դասէր ու Հայաստանն մինչեւ ամառոյս 17ին
երկուշաբթի օրն ընկերութեամբ Անդրիոյ հիւ-
պատոսարանին առաջին թարգման մեծարգոյ
թումարեան Գալուստ աղային յազգային Առաջ-
նորդարանն եկաւ յայցելուելուն խորհման ա-
մենապատիւ Ս. Հայրիկին, չորմէ բաղու մ յար-
գանք և Հնորհակալութեամբ ընդունուեցաւ ։
—Յիշեալ սրբազանն որ օգտօնութեան
համար եկած էր ի Զմիւռնա, ամիսուկէս ընդ-
մէջ մնայով և հոգեւորական միութեան զ'ոչ
կողմուղն քաղաքին յորմէ համակրական
կրօնաւանդն սիրով ընդունուեցաւ և մեծա-
նայա բազմաթիւ ճաշերով յապացոյց որդիա-
նանկեղծ սիրոյ յիշեալ սրբազանն կրօնա-
մեջեալ շաբաթ օրն վերադարձաւ ի Կ. Պոլիս ի
ցաւ սրաի Զմիւռնաբնակ Հայոցս, որոց սրտին
մէջ Հայրիկին քաղցր յիշատակն և սիրայորդոր
հայրական խորանքն անմոռաց պիտի մնան ։
Նորին Սրբազնութեան մեկնելէն շաբաթ մի
յառաջ գրեթէ 300 պատուաւոր ստորագրու-
թեամբ և ողերձ մի մատուցաւ նմա ի կողմանէ
կողմուղեան յառուկ պատգամաւորութեամբ
բաղկացեալ ի գլխաւոր ազգայնոց Ս. յառ-
նային նպատակն էր աղայել զսրբազան Հայ-
րիկն որ թէ՛ կարելի է, բարեհաճ պատուել
հիւրնկալութիւն մեր 2—3 ամիս ևս ։ Սակայն
նորին Սրբազնութիւնն որ ոչ սակաւ կրնեղո՛ւն
քաղաքին ներկայ եղանակին տարապայման
աւրէն ։ որով կրտստականայր իւր յօդացաւ
հարկ համարեցաւ մեկնիլ ի քաղաքէս թողով
մէջ ի միութեամբ ընդհանուր հոգեւոր որ-
դին իւր զարգանապատիւ Գարեգին վարդա-
պետ Սրբանձտեանց ։
—Յիշեալ ծայրագոյն վարդապետն որ իւր բա-
րեհաճոյր բնաւորութեամբն, ուսումնական և
պաշտօնական հմտութիւններովն մասնա-
կեցաւ Ս. Հայրիկին ի ձեռն բերած համա-

կրթութեանը, յիշեալ ծայրագոյն վարդապետն,
կրնեմք, ըստ հրահանգաց ընդունելոց ի Պատ-
րիարքարանէն Կ. Պոլսոյ, անյնպաւ ձեռք պի-
տի զարնէ վիճակիս ազգային երեսօխոսանական
Ժողովոյն կազմութեամբ ։
Սահմանադրական այս գործողութեանց բա-
րեկարգութիւնը չվրդովելու համար արդէն ի
կողմանէ տեղական իշխանութեան հայրական
յանդիմանութիւնը և ազգայն խորանք տրուե-
ցան 5—6 անկողնեմ ազգայնոց, կամ չաւ ևս
է անեղղ որմանկաց տխրայիշատակ երեսնեան
եզրկարգութիւն ուստի ընծայու եւր, որ պար-
կնշողութեան սահմաններէն դուրս պիտի չընեն
և պիտի զուշանան ։
Գարով փառք և Հայրիկ յարգաց մէջ Զմիւռ-
նոյ ազգային գործոց վրայօք հրատարակուած
անտեղի յորդածներուն վերջաւոր մեծապէս
որովոր յարգոյ պաշտօնակցի եղբարք Կ. Պոլսոյ
խաբուած են ի թիւ մեկոց իւրոց քաղաքին
մանաւանդ 40—50 Հայ բնականաց բողոքական
իւնեաւ յօժարութիւնն և նոյ պատճառաւ նա-
Ամերիկեան գեոպան Կ. Պոլսոյ քաղաքէս հե-
ռագիրն բուրախին անհմն և ինքնատեղծ ա-
ռապիւրեն, Կարճեալ կրօնաւոր կրցաւ իւր մե-
ծապէս որ յիշեալ լրագիրք անյուշ միամտա-
բար, ընդ բաժակի մը մէջ եղած փոքրիկ շաբ-
թումն իբրեւ ծովու սղեկութիւն հրատարա-
կած են ։ Ս. յառնային համբաններուն թէ և
Զմիւռնաբնակ Հայք ամենեւին կարեւորութիւն
չեն կրնար բնծայել, սակայն նոյն լրագրաց կրտ-
սանկեցայոց և ուրիշ գաւառաց ընթերցողք
ի զուր ցաւ պիտի գգան ի վերայ երեսակայա-
կան ազգայնաւ դէպքերու ։

Տփղիսի ՄՇԱԿ լրագրոյն Յունիսի 5 թուոյն
մէջ զհետեւեալ նամակն ընթերցումք, գրեալ ի
Թէոդորոյ ի 15էն Մայիսի ։
Երէկ Մայիսի 14ին, Քեհա Կաթողիկոսի հրա-
մանաւ սրբազան Գարեգին Այվազուլիկի թող-
նելով մեր քաղաքը մեկնեցաւ ի Ս. Եւփածին ։

Չգտցինք սուհասարակ որ մեծ կորուստ էր
մեզ համար Գարեգին արքեպիսկոպոսի հեռա-
նայը մեր քաղաքից և այդ պատճառով, չէին
կարող քաղաքին աղգայինք անտարբեր մնալ
այսպիսի առիթից օգուտ քաղելու իրանց հա-
մակրութիւնը և յարգանքը սրբաւ Սրբազնորդին
ցոյց տալով ։ Պատշաճ էր Ս. Կաթողիկոսն նաեւ
ընտրութեան վերջին օրերուն յատուկ նշանով
մեր երանապաշտութիւնը յայտնել Ռուսի նրա
քաղաքից դուրս գալուն նախընթաց օրը ազ-
գայինպատուաւոր անձինքնից գրեթէ վաթ-
սուն հոգու չափ հրաւիրեալ հաւաքուած էին
քաղաքին հասարակաց դահլիճը, ուր և ճաշ
պատրաստուած էր ։
Ճաշը վայելուչ և զուարթ էր ։ Երբոր կենաց
բաժակները հիւրերի ձեռքերում մտնումն
ներով բարձրացան, սրբազան Ս. Կաթողիկոսը հրա-
մայեց որ օգոստաւ կայսրի և վեհա Հայապետի
կենդանութեան յատուկ բաժակներ խմուին ։
Երբ բաժակները կրկին լցվեցան, քաղաքիս
պատճաւոր աղգայնոց ստորագրութեամբ մի
ուղերձ կարդացվեցաւ Այվազուլիկուն, որին սա
պատասխանեց քաղաքական խօսքերով ։
Ճաշը սկսվեց և վերջացաւ հրճուալից մտղծա-
նաց ծայներով ։ Անկէ վերջը անմիջապէս կառք
նստան ամենքը և կառքերով ուղեկից եղան
սրբազանին մինչև նրա տունը, ուրտեղ օրհնու-
թիւնը ընդունելով բաժանվեցան իրմէ ։
Ամիս 14ին, առաւօտեան ժամը հինգուկէ-
սին, սրբ և կոնայք, մեծերու փոքրեր հա-
ւաքած էին քաղաքին առաջնորդիստում ։ Այդ
տեղ կրկին սրբապաշտի օրհնութիւնը ընդունե-
լով, հրաժարական առանք նշանից ։ Շողեմաւ
երբ ճանապարհ ընկաւ, շատերը մեղանից մնա-
ցին և ծովափի վրայ մինչև որ նաւը անհետացաւ
այիբների հեռաւորութեան մէջ ։ Ս. Ա.

Երեւանէն Մայիս 25 ամսաթուով հետեւեալ
ազգօգուտ տեղեկութիւններն կը հաղորդեն ։
Ըստ հրաւիրանոց եղեցոյ ի վեհա սրբազնու-
գոյն Հայրապետէն ամենայն Հայոց առ գերա-
տէր Գարեգին Այվազեան արքեպիսկոպոսի, ի
Սրբազնութիւնն ի 14 երորդումն Մայիսի մեկ-
նեալ ի Թէոդորոյ և զաւուրս երկուս միայն

Առ Ս. Եւփածին Բրիգոր աղ-
Պատուարժան Տէր ։
Ձեռնութեամբ և զվայելութեամբ փառս նախնեաց մեր բարբա-
ւոյ երկողիւ իմն յայտնարանել ի խրատ անուսից և բամբասողաց
հարկ ի վերայ իմ եղեալ Ձերդ Մեծութիւն ի միում ի տեսակ-
ցութեան մերում, ահա ապիկ սիրով զնոյն պարտս ըստ կարի հա-
ւաքեալ նուիրեմ ։
Զմիւռնիս, 21 Յունիս 1875 ։
Ս. Սարգիս Յ. Պարսպանեան ։

Ծագիւ մատին ճաշկաւառու Հայկեան բնակի բարբաւոյ,
նորք սողիւտ չիւնն զնովաւ որպէս լեզու չախոյ,
թէ անասակ իցէ յայտնել զիմաստ բանի մասածին
լամ զտեսիլ ամեւ ի յայտ բառք կարեւորք պակասին ։
Դեռ երկիկեան նոր ուսանողք կանգնին անդէն վճռահան,
նոքաւ զճիւղ լեզու Հայկեան անուանարկին ընդունայն ։
Ազգաւ սակայն որ ի նմա թաղուն գանձուցն անսպաւ,
նաեւ թէ միտք մեր են աղքատ, այլ հէք Հայկեանն է բարբաւ ։
Երհակ սորին բարձր ի գլուխ պարծի նախնեաց մեր լեզու,
լամ սիրահար շատք ի գիտնաց Եւրոպայ խուզարկու
Դեռ նկրտին զճոխութեան նորին զգանձու կրկնեւ ։
Միւս մերայինք թոյլ ի զնին կան և ներհեն անարգել ։
Փոխան ի խորս լեզուին թափանց մտանելոյ գնել ջան,
նոքաւ անզօր զայն համարին և ի լուսանա շատանան ։
Որք, ասեն, բառք նորոց գիտնից և գիտութեանց բացայայտ ։
Այլ մեք ասեմք, զեւ և յեւրոպ պակասէին բառքըք այդ ։
Սակայն որպէս արեւմտեայք քաղեալ ի մայր հին բառից
բարձրեցին անուն և բառք բալ յայտարար նոր գիտնից ։
Ի բանիւն ամենազան բառք ճոխագոյնք մեր լեզուի
թորնեցան նոցա անուանա ըստ իմաստիցն իւրի ։
Այլ խմբեալ դեռ ինձ մի նոր Հայ Ակադեմ փառաւոր
թող քաջավարժք Հայ դպրութեան անդ բաղմնային ի յաթոռ
Մանրագիրն խուզարկութիւնքն անդէն ամցեն յերեւան
Ձեռնագրոյն բառս և անուանա յաղոց անտի ի միութեան ։
Հին են ի մեզ բառքք Բիւր, Կաւ և Զգի և Կաւ և Զգի
Այլ տես քանի վայելապէս յորինեցան ինքնովի
Եւրոպայէ և Զգի և Կաւ քանի անուանել
Հայ Ակադեմիս հայթի հայթեաց մեզ նոր գիտնից բառս ընդել ։
Ի յայտնութիւն բանից մերոց և յապացոյց լուսաւոր
նորքաշարեալ տողքք ի գիր արձանացան յանգաւոր
Ձեր ըստ խնդրոյ իմաստասէր Տեառնորդ իմոյ սիրելի
Երեւանի մատուցանեմ որպէս նուէր փառաւոր ։

20րդ հայեալեան գրելու ոսկի շատ իսկ փայլեաց ի մամուլ,
եւ ի յայտն թէ ոչ այս տողք թուեցին գէթ Ձեզ ամուլ ։
Ձեռնութիւն բանականաց նշանակէ բառս Ռեւոլ-
յարձեալ զնոյն միտքս յայտնեն Ս. Կ. Ա. Ս. Եւրոպայ
Տեհ զնախորդքս ակնարկէ և զյաջորդքս Սերունդ ։
Մակաի զբաղում մանկունս, ասէ, նոյնպէս և Կարգ և Երաւ,
իսկ Հրապարակ և Երաւագ զծերս, ասէ, համբարմ ։
Գաւար և Դաս զհրեշտակաց և զարգարոց ասի բուն ։
Ձերմանորս ակնարկեն Ռեւոլ և Միւրան—Միւրան ։
Հանդիսաւորք ի շքեղ տօնս կոչին կայսրէ և Թաթուր,
Մարտիկը Հրաւ, Բանակ, Զախտ, Գունդ, Զօրան, Վաւա և Զօր ։
Ձմեծամեծս և զիմաստունս ակնարկեն բառքքս յուրով
Առգանի, Արեւան, Կաւաւ, Երաւ և Կոյս և Ժողով ։
Իսկ տակաւանք կոչին Գլուխ, Խառնձաղանձ և Հրոս,
Արեւի, Խառն, Խառն և Խառն և Երաւան, Դաւապարակ ։
Ընդերքիւն ասին գործողք որ ի մի կէտ նկրտին,
իսկ կանանք անկապարար կոչէ զկանայս բընաւին ։
Արդ զանբանից աւերմի խօսել, քանզի ուրոյն և նոցին
են ի մատնան նախնեաց մերոց բառք և անուանք ըստ ազգին ։
Որք և ձկանց, Հօս ոչխարաց, Խառն խոյից, Պար թռչնոց,
Տարբ կանկանց, Անդաւ եղանց, ասին, Եւրոպայ արշաւոց ։
Ձի անասնոց, Վախձի գայլոց, և Երաւի մեծ ուղտոց,
Ձիւր, ասի վասն ազգաւորոց, Հօրան ոյծեաց և ուլոց ։
Ճոխ մեր լեզու և զաննչից համաժողով քաղմութիւն
Նշանակէ ուրոյն անուամբք յարմարապէս ըստ նիւթոյն ։
Հոյ և Դասակ աստեղց, ասէ, ծաղկանց տուեալ Բոյլ և Փառք ։
Դաւար գրամոց, և Դեւ խոտոց, Եւրոպայ յարգի, և Եւրոպայ Զօրոց ։
Պար անտաւաց, Պարակ թղթոց և վաճառաց բիւրագրի ։
Խառն գալարեաց, Տըլակ փետրոց, և Հաւաքի ամենի ։
Ի սոյն բառից են որք միմեանց փոխանակեն զտեղի,
եւ համանիշ այսոցիկ բառք, զոր աստ ի շար ոչ մտածի ։
Են ապաքեն և այլ բազում բառք ի մտնեանս մեր ոսկի ։
Որք զանամովին իմաստ բանի գունաւորեն զերթ արգիլ ։
Արդ որ զմեր վեհ բարբաւութիւն արհամարհանս արկանեն,
կամ գիտնիցն զգի նորին, և կամ երբեք ոչ գիտեն ։
Եթէ գիտեն և ուրանան զոսկեղիկի ճոխութիւնն,
ընդ գէմ խոյնի իսկ մեղանչեն անուղղայից պէս հանդոյն ։
Իսկ թէ չիցեն գիտակ ընդ էր կան դատաւորք ինքնակոյ ։
Ձի անուանս սուտ են վեհոք, Թող խօսնեցին ուրեմն ոչ ։

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԵՎԼՈՒՄՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ